ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏՅԱՆ

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԶՄԻՒՌՆԻԱ ՈՒՐԲԱԹ 19 ՅՈՒՆՎԱՐԻ 1851 — ԹԻՒ 381

ԶՄԻՒՌՆԻԱ, 19 Յունվարի։

Բարձրապատիւ Մեծ Եպարգոս Ռէշիտ փաշային նախագահութեամբ հաստատուած հայրապետական և իմաստուն կառավարութիւնը բարեխնամ գոլելի փութով մը օրըստօրէ յառաջ կը տանի և կը ծաղկեցնէ ամէն տեղ Նոր Բարեկարգութեան (Թանզիմաթի խայրիէին) օգտակար տնօրէնութիւնները ըստ ամենայն մասին։ Յայտնի է ամէնուն որ Նոր Բարեկարգութեան գլխաւոր նպատակներէն մէկը՝ օրինաց առջև կատարեալ հաւասարութիւն հաստատելէ օսմանեան հպատակ ամէն ազգաց համար՝ թէ քրիստոնեայ է եղեր թէ մահմէտական և թէ հրեայ։ Այս կարգադրութէն հարկաւորապէս յառաջ պիտի գար դատաստանական ատեաններուն փոփոխութիւն և նորոգութիւն մը, որ ժամանակէ մը ի վեր տեղի ունեցաւ ի Կոստանդնուպոլիս, այսինքն վաճառականութեան ատեանը (Թիճարէթ մէճլիսին) և քրէական յանցանաց ատեանը (Ճինհա մէճլիսին) հաստատուեցան։ Այս ատեաններուն առաջնոյն մէջ առևտրական վէճերը կը քննուին և կորոշուին վաճառականութեան կանոնաց համեմատ, իսկ երկրորդ ատեանը՝ քրէական այսինքն ծանր յանցանքները կը քննէ և կը դատէ ըստ օրինաց։ Հարկ չէ ըսել թէ այս երկու ատեաններուն մէջ ալ քրիստոնէից և հրէից վկայութիւնը ընդունելի և վաւերական է ինչպէս մահմէտականաց վկայութիւնը։ Մինչև ցայսօր այս նորահաստատ դատաստանարանները մայրաքաղաքին մէջ միայն կը գտնուէին, բայց օգոստափառ առատագութ Կայսեր մարդասիրական հրամանաց համեմատ՝ մօտօրէս յատուկ հրովարտակներ յուղարկուեցան տերութեան գլխաւոր քաղաքները, որպէսզի այն տեղուանքը ևս նմանօրինակ ատեաններ հաստատուին։

Ուստի Իզմիրի մէջ արդէն քրէական յանցանաց ատեան մը (Ճինհա մէճլիսի կամ զաբթիէ) հաստատուեցաւ այս օրերս՝ նահանգիս կուսակալ բարձրապատիւ Հալիլ փաշային խնամքը։ Այս ատեանը ամէն չորեքշաբթի օր պիտի գումարուի՝ ուր պիտի դատուին չարագործութիւնները որ կը պատահին օսմանեան հպատակաց մէջ առանց տարբերութեան կրօնի։ Նմանապէս այն ոճրագործութիւնները՝ որ օսմանեան հպատակաց և օտար տերութեանց հպատակաց մէջ կը պատահին։ Եւ այս վերջի դիպուածին մէջ հիւպատոսները կամ իրենց փոխանորդները ներկայ պիտի գտնուին դատաստանին, և մասնակից ըլլան պիտի տրուելու վճռոյն։

Այս ատեանէն ի զատ վաճառականութեան ատեանն ալ հաստատուեցաւ քաղաքիս մէջ, որուն անդամները հետևեալներն են, և երեք ամսուան համար միայն կարգեցան։

Նախագահ ժողովոյն. բարձրապատիւ Հալիլ փաշան կամ իւր փոխանորդը։

Օսմանեան երեսփոխանք. պարոնայք Լէվլեզատէ և Պնեատաս Բաբաղօղլու։

Օսմանեան հպատակ դատաւորք. պարոնայք Էնիշէհիրլի օղլու, Գաբանճը օղլու, Թագուդ Սրվաղլեան, Ռանպաղ Խրիստօ։

Դատաւորք եւրոպացիք. պարոնայք Գուրիւրիէ, Հ. Իւլիք, Տ. Բարոտի, Ֆոթի Օմիրօ։

Խորհրդոյ քարտուղար. Իպրահիմ էֆէնտի։

Թարգման. պարոն Մ՝անաս։

Հաւասիկ այս ատեանին գլխաւոր կանոնները զորոնք՝ լրագրոյս 377երորդ թերթովը հրատարակեալ խոստացեր էինք։

Յօդուած 1. Նահանգիս կուսակալը՝ վաճառականութէ ատեանին նախագահը ըլլալով ըստ իրաւանց, ամէն առևտրական դատերը, իւր հրամանաց համեմատ, յիշեալ ատեանին պիտի յանձնուին, դատաստանը տեսնելու համար։

Յօդ. 2. Ընդհանուր կուսակալը իւր նախագահութիւնը մէկուն պիտի յանձնէ, ուստի ուրանց իւր կամ իւր փոխանորդին ներկայութիւնը դատաստան մը պիտի չտեսնուի։

Յօդ. 3. Նախագահէն ի զատ՝ երկու օսմանեան հպատակ գլխաւոր վաճառական երեսփոխան պիտի կարգուին 1 տարուան համար, այլև 4 ուրիշ վաճառականք, նմանապէս օսմանեան հպատակ, երեսփոխան պիտի ընտրուին իրենց ազգաց վաճառականաց ժողովէն. նաև օտար տերութեանց հպատակ 4 վաճառականք պիտի ընտրուին իրենց հիւպատոսներէն. Ամիւռնիոյ ընդամէնը ութ վաճառականք՝ որ ծանուցեալ ըլլան իրենց անկողմնասէր և արդարասէր բնաւորութեամբը, դատաւոր պիտի կարգուին եռամեայ միջոցի մը համար. որոց անուանքը վաճառականութեան ատեանին արձանագրութիւնը մէջ պիտի նշանակուին։

Յօդ. 4. Այս ատեանին անդամոց թիւը ոչ պիտի աւելնայ և ոչ պիտի պակսի. իսկ եթէ հարկ կըլլայ անոնց մէկուն տեղուրիշը դնել, այն ժամանակը ելլողին անուանը տեղ նոր մնողին անունը պիտի գրուի արձանագրութեանը մէջ։

Յօդ. 5. Եթէ օրինաւոր պատճառի մը համար օսմանեան հպատակ անդամներէն մէկը բացակայ գտնուի ատեանէն, օտար տերութեան հպատակ անդամ մը ևս, որուն անունը բաղդովի պիտի ընտրուի, պիտի քաշուի նոյն օրուան նիստէն։ Նմանապէս միւս օրերը, եթէ յիշեալ անդամը ներկայ չգտնուի։ Եթէ անդամոց թիւը վեցէն պակաս է, նոյն օրը նիստ պիտի չըլլայ. քանզի վաճառականութեան ատեանին այս թիւէն պակաս նիստով ըրած որոշումները անվաւեր են։

Յօդ. 6. Ուրիշ ուրը վաճառականք ևս թէ

ԲԱՆԱՍՊՐԱՆՔ

Պոպասխանիչ զաբանութեան պարոն Իվանովի։

(Շարունակութիւն և վերջ)(1)

Որովհետև որ ինչ մաքրութիւն, եղանակ յայտնութեան մասց և ոճ գրուածոց տեսանին յաբարս Մովսէսի Խորենացւոյ, Ղազարայ Փարբեցւոյ, Կորեան և այլոց ընդ իշխանութեամբ Պարսից ի հինգերորդ դարու, զնոյնն է տեսանել ի գրուածս Կամիտասայ Կաթողիկոսի և այլոց ընդ իշխանութեամբ Յունաց, և զնոյնն ի Յովհաննէս Կաթողիկոս, Յ՝Երզրունին Թումայ, ի Գրիգոր Նարեկացի և յայլս ընդ տերութեամբ Հայոց ի տասներորդ դարու, և յոր ոճ գրէին ի սկզբան հինգերորդ դարու հեղինակք Հայոց, զնոյն ունին գաղթականք մեր յԻտալիա, յԱստրիա, յԱրևելեան Հնդիկս, ի Պաղեստին և ի Յունաստան այժմեան մատենագիրք մեր յինն և ի տասներորդ դարու. և եթէ ընդունելի է ընդհանուր կանոնն թէ՝ տիրող լեզուք առնեն ոսպաւորութիւնս ի տիրեալն, այլայս հաւանական եղիցի, յորժամ առաջինքն գրականութեան մասամբ ճոխ, և կատարեալ լիցեն համեմատութեամբ վերջնոցն. և այսմ բազումք են օրինակք՝ զորօրինակ, Հռոմայեցիք տիրեալ Յունաց՝ ինքեանք առին զհրահանգութիւն նոցին, Լանգոբարդք, Վեստգոթք, Էլանք և այլք գրաւեալ զԻտալիա՝ ինքեանք ուսան զլեզու Իտալացւոց. սապէս և Հայք թէպէտ թուով սակաւ քան զայժմեան Պարսիկս և նախնի Հայոց, այլ հրահանգութեանն մասամբ ոչինչ պակաս և իբր ի բազումս վերադաս քան զնոսա. ուստի և առ Հայս բաց ի կորուսելոյն հաշուին արդ հին և նոր պատմագիրք և ժամանակախօսք միայն աւելի քան 40, իսկ առ Պարսիկս և Հոռիս միանգամայն առեալ և ոչ կէսն անգամ այսր թուոյ յուսալի է գտանել. մանաւանդ զի եթէ զուսումնականութիւն և զհրահանգութիւն ազգի ուրուք՝ հարկէ չափելուս՝ մեծարանօք և տպագրատամբք, ահա տերութիւն Պարսից կանգուն կայ և ի նմա հազիւ մարթէ հաշուել վերկուս կամ զերիս անկերպարան տպարանս. այլ ներհակ այսմ Հայք, որք աւելի քան 1400 ամօք կորուսեալ կանխաւ զընդհանուր անկախութիւն ազգային և ցրուեալ յամենայն մասունս աշխարհի թէպէտ ընդ հազարաւոր տառապանօք, հարստահարուիք և հալածանօք, այսու ամենայնիւ պարծանօք կարեն մատնացոյց լինել աւելի քան ի 20 տպարանս, յորոց ոմանք ոչինչ իւրք պակաս քան զմեծամեծ տերութեանց՝ ի Սանկտպետերբուրգ, ի Մոսքվայ, ի Տփխիս, ի Շուշի, յԷջմիածին, ի Կալկաթա, ի Մատրաս, յԵրուսաղէմ, ի Կոստանդնուպօլիս, յԻզմիր, ի Վենետիկ, ի Վիեննա և այլուրեք, յորս տպին 4–12 այլևայլ ազգաց լեզուօք մատեանք. Ընդ հպատակութեամբ կալոցն Պարսից և Յունաց ոչ բնաւ փոփոխեցաւ գրաբառ լեզու Հայոց՝ զի ահա Հայք գերեվարեալք ի Պարսկաստան 14 դարուք յառաջն ի Շապհոյ երկայնակեցէ և յայլոց բռնաւորաց, նոքին՝ յամի 1828 վերադարձան ի հահմանս հնոյն Հայաստանի զառաջինն ունելով բարբառ. Ի վերոյգրելոցս յամենայնէ եզրակացուցանելի է 1. թէ սեպհական երիկս Հայոց յաւուրց անտի նախահօրն Հայկայ էր Հայաստան գոնէ իբր 2000 ամօք յառաջ քան զԲրիստոս. 2. Սուրբ գիրք և մատենագիրք Բաղդէացւոց, Յունաց, Հռոմայեցւոց և այլոց՝ արմատական բնակիչս Հայաստանի Հայս և եթէ ճանաչեն, և ասելն Մ. Խորենացւոյ զելս Հայկայ ի Բաբելոնէ՝ ոչ զայն նշանակէ թէ՝ Հայք գաղթեցան անտի և են սերունդք Խորոց, այլ թէ նա գոլով որդի Թորգոմայ, որդւոյ Թիրատայ, որդւոյ Գամերայ, որդւոյ Յաբեթի, որդւոյ Նոյի, բնակելոցն ի Հայաստան՝ գնացեալ էր ի Բաբելն և վերադարձեալ. և ասելն պատմողաց ոմանց՝ ի Յունաց՝ Երմենոսի ումեմն գաղթել կամ Փոխուցեցոյ ոմանց (1250) ի Հայս՝ են պարզառասպելք. զի Հայք յառաջ քան զայն բնակէին անդէն ունելով զառանձին տերութիւն ընդ պաշտպանութիւն Խորեստանի. 3. Լեզու Հայոց (որչափ և աշխատեցան լեզուախոյզ մատենագիրք) չունի զոչինչ ազգակցութիւն և յարաբերութիւն ընդ Երամեան կոչեցեալ լեզուացն, յառաջեկելոցն յարաբացի արմատոյն՝ այսինքն Եբրայեցւոց, Բաղդէացւոց, Խորոց, Փունիկեցւոց, Պունիկեանց կամ Կարթագենաց, Եմգարաց և այլոց, բաց ի Սանսկրիտացւոյն և Օանդկին. ուստի և զորինչ գրեցին Խորաբն, Պոշար և պարոն Իվանովն զնոյնութիւն այսր լեզուի ընդ վերնոցն՝ գրեցին երազելով ի ցնորս։ Այսու բաւականացեալ առայժմ՝ բացատրեցից ի դէպ ժամու և զայլ զրպարտութիւս այլոց։

Կարապետ Վարդապետ Շահնազարեանց,
Դպրան տրէոյ Էջմիածնի։

(1) Տես լրագրոյս 376, 378, 379 և 380 թիւերը։

Ամենայն ինչ, զոր հրամայեցեալ է Տէր, գործեսցուք։

Գլուխ 1. Եւ եղեւ ի տասներորդ եւ երրորդ ամի թագաւորութեան Սեդեկիայի թագաւորի Յուդայի, ամսոյ տասներորդի, ի հինգերորդի ամսոյ, զի ես գերեալ էի ի գերութեան Բաբելացւոց առ գետովն Քեբարայ, բացարձակեցան երկինքք, եւ տեսանէի զտեսութիւնս Աստուծոյ։ Ի հինգերորդի ամսոյ, զոր ասացեալ է թագաւորութեան Սեդեկիայի թագաւորի Յուդայի, եղեւ բանն Տեառն առ Եզեկիել քահանայ որդի Բուզեայ ի երկրի Քաղդէացւոց առ գետովն Քեբարայ, եւ եղեւ անդ ի վերայ նորա ձեռն Տեառն։ Եւ տեսանէի, եւ ահա հովանի հիւսիսոյ գայր ի քամեաց, եւ ամպ մեծ, եւ հուր ոստնեալ, եւ շրջապատ նորա լուսաւոր, եւ ի միջոցի նորա նման գունից երանգաց ի միջոցի հրոյ։ Եւ ի միջոցի նորա նմանութիւն չորից կենդանեաց, եւ այս է տեսութիւն նոցա. նմանութիւն մարդոյ նոցա։ Եւ չորեքեան երեսք մի, եւ չորեքեան թեւք մի։ Եւ ոտքն նոցա ուղիղք, եւ ներբանք ոտից նոցա նման ներբանաց հանդերձի հաստատեալ։ Եւ ունէին զձեռս մարդոյ ի ներքոյ թեւոց նոցա չորից կողմանց։ Եւ չորեքեանքն զերեսս նոցա եւ զթեւս նոցա։ Ընկերակցեալ էին թեւք նոցա միմեանց, չդառնային ի գնալն նոցա, զոր գնային։ Երեսք նոցա նման երեսաց մարդոյ, եւ երեսք առիւծու ի աջոյ չորից կողմանց, եւ երեսք եզան ի ձախոյ չորից կողմանց, եւ երեսք արծուոյ չորից կողմանց։ Եւ թեւք նոցա զատուցեալք ի վերուստ, ընկերակցեալք էին թեւք մի մի նոցա, եւ երեքեան թեւք ծածկէին զմարմինս նոցա։ Եւ գնային զոր գնային, չդառնային ի գնալն նոցա։ Եւ զերեսս նոցա նման տեսանելոյ հրոյ վառելոյ, նման տեսանելոյ ածխոց հրեղինաց։ Նման տեսանելոյ ճրագաց, զոր գնային ի միջի նոցա, լուսաւոր հրոյ։ Եւ ելանէր հուր ի միջոցի նոցա։ Եւ զերեսս նոցա նման տեսանելոյ հրոյ։ Եւ կենդանիքն զերեսս նոցա։ Եւ գնային զոր գնային, չդառնային ի գնալն նոցա։ Եւ տեսանէի զերեսս նոցա։ Եւ ահա մի անիւ ի վերայ երկրի առ երեսս չորից կենդանեաց նոցա։ Եւ անիւքն նոցա նման տեսանելոյ քարանձաւի, եւ նոքա նոյնք։ Եւ տեսանելիք նոցա եւ գործք նոցա նման էին անիւի ի միջի անիւի։ Ի գնալն նոցա գնային ի չորս կողմանս նոցա, չդառնային ի գնալն նոցա։ Եւ զանիւս նոցա զերեսս ունէին, եւ զերեսս նոցա լցեալք էին աչաց ի չորս կողմանս։ Եւ գնային զոր գնային, եւ կենդանիքն զոր գնային, գնային անիւքն ընդ նոսին։ Եւ զոր գնային կենդանիքն, գնային անիւքն ընդ նոսին։ Եւ զոր գնային ի գնալն նոցա

ները անպատիժ պիտի մնան, ժողովուրդը իւր հանդարտութիւնը պիտի չկընայ ստանալ։

"Ուստի պարկեշտ ժողովուրդը պաշտպանելու և ազատելու համար այնպիսի անձանց ձեռքէն որ կը մոլորեցնեն զինքը, և դապէլու համար ապրստամբական շարժումները որ սկսան երևան ելլել, որոշեցաւ որպէսզի Սամսոնի նաւահանգստոց և ծովի ղերեզմանոց պաշարումը վերատին հաստատուի։ և այս պաշարումը առաջիկայ ծանուցագրոյն ամսաթուէն քսան օր ետքը՝ ի գործ պիտի դրուի։ Մուստաֆա փաշան՝ որ յիշեալ կղզին կը գտնուի, հրաման ընկալաւ այս պաշտօնը կատարելու։ ուստի հաձեսջիք, մեր մարիայլ դեսպան, ժամանակին հաղորդել ձեր ազգին նաւուցը այս կարգադրութիւնը, ծանուցանելով թէ յիշեալ պայմանաժամը լրմնալէն ետև՝ ինչ նաւ որ Սամսոն կը հասնի և կուզէ նաւահանգիստները մտնել կամ մերձենալ անոր ծովի ղերեզմանը՝ ընդդէմ հրատարակուած կանոնացը և ազդարարութեանցը։ այնպիսի նաւը ենթակայ պիտի ըլլայ պաշարումը տուրս նաւատց դէմ ի գործ դրուելու միջոցներուն և այս կարգադրութիւնները զորութիւն պիտի ունենան մինչև որ պաշարման վերնալը (որ այժմեան խռովութեանց դադրելէն ետև տեղի պիտի ունենայ) ի պաշտօնէ (բէմէն) հաղորդուի ձեր Վսեմութեանը։

"Պատիւ հաճարիմ ինձ ստորնել զձեզ։

"(Սորագրեալ։) ԱԼԻ"

Ընդհանուր շաբթու ընթացքը Կարկաթայի Ազգային 1850 Նոյեմբերի 15և30 թերթերը։ որոյմէ առաջնոյն մէջ հետևեալ յօդուածը կը կարդամք։

"Ազգս։ Բաղումանգամ լսակրեցաք զքաղաքէ այսմանէ և պատմաբանեցաք իսկ։ բայց ոչ ի մին և ոչ ի միւսն զդատաք զուարճութիւն յանձինս մեր այնպիսի՝ որպէս ի սմին յայսմիկ։ Յայտնի ամենեցուն է, զի տերութիւն Ընդգլխական Հնդկաստանի՝ հաստատեալէ յամսոյս հեռէ զՀեմարան բաղում ուսմանց ի մայրաքաղաքի յայսմիկ, և զարդիս ազդօրէն զուարճանալ տեսանել։ զի որպէս դրէ Ցիրէնդ օվ Ինդիա, առեալ Էդուարդ Էնդէնճերէ, ուսուցիչ երկրաչափութեան և հոլագործութեան ի նմին ճեմարանի է հայկազն պարոն Նիկողայոս Բարսղեան։ որ "ի նորոյ կատարեաց ասէ, զկարի իմն գեղեցիկ տեղագրութիւն Աղրայ քաղաքի և արուարձանաց նորա՝ ի չափ 16 մատանց առ մին քառակուսի մղոն"։ Գործն գերազանց համբաւի ի հրատարակողէն, որ պատեհ եգիտ զննութեան նորա։ և այնքան արժանաւոր մինչ հրամայեցաւ վիմագրիլ ծախիւք տերութեան։ Յուսամք օրինակ արդոյ պարոն Բարսղեանին վարեսցէ զոգիս ազգային պատանեկաց ի տեղիս տեղիս՝ ի յառաջադիմութիւն ուսման, և ծաղկեցի Հայաստան անուամբք և արդեամբք իմաստասէր զաւակաց իւրոց"։

ՆՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ, 13 Յունվարի։

Նշանակաւոր թէ արժանի երևելի դէպք մը չկայ։ Բարձրագոյն Դուռը զբաղեալէ Սամսոնի գործոյն կարգադրութեանը վրայօք։ որուն հարկաւոր եղած ամէն միջոցները ի գործ դրաւ։ ուստի երկբայութիւն չկայ թէ յաջող փոխնան մը պիտի ընդունին և յիշեալ կղզոյն հանգստութիւնը շուտով պիտի հաստատուի։

—Թագաւորական հրովարտակաւ

Իսրթեվ փաշային որդին Հասպ պէյը՝ տերութեան թղթակցութեան տեսչ կարգեցաւ և այս առթիւ երկրորդ կարգի պաշտօնական աստիճան ստացաւ։

Մաքսատան արկղապետ Մէհմէտ Հաֆըզ էֆէնտին երկրորդ կարգի երկրորդ աստիճանի պաշտօնական անուանեցաւ։

Բարեպաշտական հաստատութեանց տեսուչ Մրզա էֆէնտին՝ կառավարութեան դիւանապետ եղաւ։ և իւր առաջի պաշտօնը Լոֆըզ փաշային յանձնուեցաւ։ որ մինչև յայտնի է, քանիցս անգամ եկամտից պաշտօնեայ եղած է։

—Բարձրագոյն Դրան Թարգմանատան գլխաւոր անդամներէն մեծաշուք Էլի Նէհատ էֆէնտին մօտ օրերս պիտի մեկնի Իզմիր գալու, ուր պիտի շարունակէ իւր պաշտօնը որ արդէն սկսած էր, այսինքն Լ։ բոպայցոց՝ իրենց կանանցը անուամբ ունեցած անշարժ ստացուածքը և անոնց արժէքը պիտի ստանագրէ։ Յիշեալ պաշտօնատարին յանձնուած է նաև Իզմիր և անոր շրջականները բնակող օտար տէրութեանց հպատակաց աշխատանքը հաստատակաց համարը ընել, զոր մեծապատիւ Ահմէտ Վէֆիք էֆէնտին սկսած էր ըստ ժամանակին, բայց աւարտեն չունեցաւ կատարելու։ Այս գործոյն վրայօք տեղեկութիւն տալու համար՝ կառավարութիւնը յունվարի 4 ամսաթուով յիշատակագիր մը յուղարկեց օտար տէրութեանց փոխանորդաց։

—Ամասիոյ 3ին մեծ հացկերոյթ մը եղաւ Գաղղիոյ հասարակապետութեան գեսպանատունը, ուր ներկայ էին արտաքին գործոց տեսուչ վսեմափայլ Էլի փաշան, մեծապատիւ Ռեշիդ Լեան Մկրտիչ Էմիրան, Ազատեանեան Գրիգոր աղան որ Այի Ստեֆանոյի երկրագործութեան դպրոցին վերատեսուչն է։ և օսմանեան ու գաղղիական դամենները մասնաւորապէս Ժողովին որ Գաղղիոյ տերութեան հետ եղած մաքսի դաշնադրութիւնը կարգադրեցին։ Գաղղիոյ դեսպան վսեմափայլ գօրապետ Օրիքը և իւր ազնուուհի լծակիցը իրենց մարդասիրական քաղցր քաղաքավարութեամբը ևս առաւել փառաւորեցին այս հացկերոյթը։ որուն հետևեցաւ կաքաւու զմայլելի հանդէս մը որ գրեթէ բոլոր գիշերը տևեց։

—Ռումելիի նահանգաց վերատեսուչ վսեմափայլ Սամի փաշան ամսոյս 7ին Թուհէրի Պահրի օսմանեան շոգենաւով մեկնեցաւ իւր բարձր պաշտօնին երթալու։

—Մեծին Բրիտանիոյ Այորեաց մէջ ունեցած ընդհանուր հիւպատոս Հիւկ Բոզ գնդապետը՝ Կոստանդնուպօլսոյ դեսպանատան առաջին խորհրդոյ քարտուղար անուանեցաւ իւր կառավարութեան հրամանաւը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՐՔԵՐ

ԱՆԳԼԻԱ։ Լոնտոն, 7 Յունվարի ըստ նոր տոմարի։ Քաղաքականութիւնը հանդարտութեան մէջ է միշտ, և առևտուրը ու ճարտարարուեստները օր ըստ օրէ յառաջանալու վրայ են։ ինչպէս կը տեսնուի հետևեալ հաշուեցուցակէն։ որ մօտ օրերս հրատարակուեցաւ ի պաշտօնէ։ Ընդհանուր

ոկզբանէ և այսր ընդ ամենայն դարս՝ ի միասին՝ այն է ի 6 յունվարի։ Թէպէտ զառաջադրութիւնս զայս մարթէր հաստատել և ժամանակագրութեամբ Աբեսարանին Ղուկայ և վաւերական վկայութեամբ ոմանց հուչակաւոր Հայրապետաց եկեղեցւոյ մերոյ և մատենագրաց։ որոց սակի են Յովհան Իմաստասէր և Ներսէս շնորհալի Կաթողիկոսք և այլք։ այլ զի մի՝ ի ներքս ապրդեսցին կարծիք կասակցութեան՝ բուռն հարցուք զհայրապետաց և զմեծահամբաւ հեղինակաց և լուսաւորչաց եկեղեցեաց Յունաց և Պապականաց։ զի և ուղղութի կարգաց և կրօնից ոչ բազմութեամբ ժողովքեան կամ անդամոց հաստատութեան ուրուք և երկրաւոր իմաստութեամբ հաստատեալ կնքի։ այլ ճշմարտութիւն խնդրոցն և միաձայն վկայութեամբ վկայիցն։ Սուրբն Եպիփան։ որ եկաց յերկրորդ դարուն՝ ի գիրս իւր յաղագս եկեղեցեաց Յունաց։ Սրոց և Սորուց հատորդ։ երես 466։ Իսիդոր Պելուսիոտ՝ գիրք Ժ. թուղթ 110. երես 301։ Սուրբն Գրիգոր Նազիանզացի Սոտուածաբան Հայրապետ Կոստանդնուպօլսոյ Ռառ Լը. երես 613և614։ Մեծն Բարսեղ Կեսարիոյ Հայրապետ՝ Ռառ Լե. երես 593։ Յովհան Ոսկեբերան Հայրապետ Կոստանդնուպօլսոյ՝ Ռառ Հդ. գիրք Ե. երես 524։ Գրիգոր աբանելագործ՝ նոյնպէս Հայրապետ Կոստանդնուպօլսոյ (Ի ձառին ծննդեան Քրիստոսի, յորում խօսի և զմկրտութիւնէն։) Փոտայ կանոնաց գիրք կամ մատեան օրինաց։ Տիտուլ կամ Տիտղոս Է. մասն ա. երես 989։ Սոքա ամենեքին ոչ միայն վկայեն՝ ի ճառս և՝ ի բանս իւրեանց թէ՝ ի սկզբանէ հետէ կատարէին Քրիստոնեայք զերկոսին զայսոսիկ տօնս՝ ի միասին, այլ թէ և՝ ի միում աւուրս այն է՝ ի 6 յունվարի։ յորոց Յովհան ոսկեբերանն՝ ի ճառին, զոր խօսեցաւ՝ ի Պատրիարքական եկեղեցւոջն Կոստանդնուպօլսի՝ առաջի Կայսեր և երևելեաց յեկեղեցականացն և յաշխարհականացն Յունաց՝ յետ խօսելոյ հոսաձայն բանից յիշատակեալ մատենագրացդ՝ յաւելու նաև թէ՝ չեն ինչ աւելի քան թէ տասն ամբ։ յորմէ հետէ բաժանեալեն երկոքին տօնքս՝ ի միմեանց։ և զի եկաց սուրբն Յովհան ոսկեբերան՝ ի վերջն չորրորդ դարուն և՝ ի սկզբան հինգերորդին։ զհետ գոյ ասել թէ գոնէ յընթացս 400 ամաց կատարէին ամենայն Քրիստոնեայք զերկոսին զայսոսիկ տօնս՝ միասին։ Հանրապատում բառարանն՝ ի Ռուս լեզու (Էնցիկլոպիդիչեսկի լեքսիկոն) հատոր 6. երես 182։ յետ կարգելոյ հոմաձայն գրուածոց մերոց զբան իւր։ յաւելու նաև "թէ տօն Յայտնութեան ըստ ժամանակի ծագման կամ սկզբնաւորութեան իւրոյ է մի՝ ի կարի հնագունեցն։ զոր "Քրիստոնեայք սահմանեցին յառաջին դարան։ "՝ի սկզբան կատարեալ լինէր Յարևելս զոյգ ընդ "տօնի ծննդեան Քրիստոսի։ և Քրիստոնեայք "Հրուսաղէմայ։ Աղեքսանդրայ և Այորեաց զայսոսիկ "երկուս տօնս կարգային միով հասարակ անուամբ "այն է կոչելով Աստուածայայտնութիւն և յեկեղե- "ցիս Եգիպտոսի գոյր աւանդութիւն թէ երկոքին "տօնքս այսինքն Մկրտութիւն և Օծունդն Քրիս- "տոսի պատահեցան՝ ի միում աւուր՝ յատկապէս "՝ի 6։ յունվարի ըստ Յովհաննու Կասսիանոսի։ "գլուխ բ. երես 345։ Յետս չորրորդ դարուն "կամ՝ ի սկզբան հինգերորդին նախ՝ եկեղեցին "Աղեքսանդրացւոց բաժանեաց զտօն Օծունդեան "Քրիստոսի՝ ի Մկրտութենէ կամ՝ ի Յայտնութենէ "և սահմանեաց տօնել զառաջինն՝ ի 25 դեկ- "տեմբերի։ որում՝ զհետ չոգան և այլ ամենայն "եկեղեցիք Արևելից՝ բաց յեկեղեցւոյն Հայոց "որ ցայսօր ժամանակի կատարէ զերկոսին տօնսն "՝ի միասին՝ ի 6 յունվարի"։

Հեղինակն այսր յօդուածոյ թէպէտ Յունադաւան և պաշտպան կարգաց եկեղեցւոյ իւրոյ։ այլ գոլով այր ճշմարտասէր և ուղղաբան՝ ոչինչ ամօթ համարի հրատարակել և հուչակել զանշարժութիւնն եկեղեցւոյ Հայոց՝ ի սահմանս նախնականս։

Կարապետ Վարդապետ Շահնազարեանց։

տարուոյն նոյեմբերի 5էն մինչև՝ դեկտեմբերի 5՝ մէկ ամսուան մէջ Անգլիայի վաճառականութիւն գումարը՝ 671,150 լիրա սթերլինա աւելի է եղած 1849ին նոյն ամսոյն գումարէն։ Իսկ բոլոր եղած ապրանաց բոլոր գումարը 1850 ամին առաջի 11 ամսոց մէջ՝ 60 միլիոն 400,525 լիրա սթերլինա (6644 միլիոն 57,750 ղրշ) եղաւ։ Նոյն ամսոց մէջ 1849ին դուրս եղած ապրանաց գումարը՝ 54 միլիոն 89,809 լիրա սթերլինա էր. ըսել է որ 6,310,716 լիրա սթերլինա աւելցեր է 1849 տարուոյն վրայ։ Այս օրինակ յաջողութենէ յորդորուելով՝ կառավարութիւնը միտք՝ ունի, կըսէ Մորնինգ Քրոնիքլը օրագիրը՝ 2 միլիոն լիրայի չափ նուազեցնել հասարակութիւն վրայ եղած հարկը։

—Պապական կոնդակէն ծագած խռովութիւնը օր ըստ օրէ կըհանդարտի. և այս խնդիրը՝ ինչպէս արդէն զրուցած ենք, ազգային խորհրդաժողովին մէջ ըստ ժամանակին՝ օրինաց համեմատ պիտի որոշուի։ Այց դժբաղդութեամբ կղերականքանի մը լրագիրներ այս հանդարտ վիճակը՝ հռոմէական կրօնին հատար մեծ յաղթութիւն մը կարծելով՝ գրգռութեան և յուզման պատճառ կուտան հասարակութիւն մէջ, իրենց ժամանակէ դուրս հրատարակութիւններովը. որոց գրածին նայելով՝ ամէն օր մեծամեծ դարձեր կըլլան, և հետևաբար քիչ ժամանակուան մէջ բողոքական Անգլիան ծունկ չոգած պիտի տեսնեմք Պապին առջև, իւր խոնարհ հնազանդութիւնը անոր մատուցանելու համար։ Ժամանակը անշուշտ պիտի ցուցանայ իրաց ճշմարտութիւնը երևան հանելու. բայց առայժմ մարդասիրական ոգիէ շարժեալ առաւելապէս կըցանկայինք մեք դարձեր ըսելու, ոչ թէ Անգլիոյ մէջ, այլ Հռոմի վիճակաց և բոլոր Իտալիայի մէջ՝ այս երկիրներուն ժողովրդեան բարեկեցութեանը համար։ Կըցանկայինք ըսելու որ Հռոմի զանազան բանտերը պարպուեր են, որոնք բաւական չըլլալով Պապին աշխարհական կխանութիւնը չճանչցող բազմութիւ կալանաւորները պարունակել, դժբաղդաբար նոր արգելքաններ ևս (գալէրի նուռվէ) կըհաստատուին։ Կըցանկայինք ըսելու, կըսեմք, որ Պիոս Ինն բորդ քիչ կամ շատ վստահութիւն ունենալով իւր հաբազատ որդուոցը վրայ, հարկ չհամարի 20 հազար իտալացի զօրքով և 14 հազար գաղղիացի զօրքով շրջապատել իւր աթոռը, որպէսզի կարող ըլլայ հաստատուն նստիլ անոր վրայ։ Վերջապէս կըցանկայինք խղճի մտօք որ Հռոմի վիճակաց խեղճ բնակիչները յիշեալ օտար զօրաց ծանր ծախքէն օր յառաջ թեթևնան և ազատին, զորոնք իրենց չքաւորութիւնը և տառապելի աղքատութիւնը չկրնար տանիլ։

Հաւասիկ դարձեր, որ շատ աւելի արժէքուն ըստ ամենայն մասին, քան թէ բանի մը դիւրափոխ անգլիացւոց դարձերը։

ԼՈՆՏՈՆ, 4—16 Յունվարի։ Բաղաքական նոր դէպք մը չկայ։ Լորտ Ջոն Ռասսելը յատուկ նամակաւ մը կըծանուցանէ ազգային երեսփոխանաց ժողովոյն մէջ ունեցած իւր քաղաքական բարեկամացը և կուսակցացը թէ փետրվարի 4ին ըստ նոր տումարի՝ խորհրդանոցը բացուելով ծանր առաջարկութեանց վրայօք վիճաբանութիւններ պիտի ըլլան. ուստի կաղաչէ որ ամէնքն ալ նոյն օրը ներկայ գտնուին իրենց նստարաններուն վրայ։

ԳԱՂԳԻԱ. Փարիզ, 5—17 Յունվարի։ Ժամանակէ մը՝ ի վեր Հասարակապետութեան գահերէցին և ազգային օրէնսդիր ժողովոյն մէջ երևան եղած հակառակութիւնը իւր ցաւալի պտուղը յառաջ բերաւ մօտ օրերս։ Սահմանադրութեան կանոնաց դէմ՝ ազգային երեսփոխան մը մսիւ Մոկէն անուն՝ 1000 ֆրանքի չափ պարտքի համար բանտարկեցաւ կառավարութեան հրամանաւը։ Այս բանը մեծապէս խռովութիւն պատճառեց ազգային ժողովոյն մէջ. որ իւր անդամոց մեծագոյն մասին հաճութեամբը որոշեց թէ պէտք է անմիջապէս ազատութիւն տրուի յիշեալ երեսփոխանին։ Կառավարութիւնը յօժարութիւն ցուցընելով այս որոշումը՝ ի գործ դնել, ազգային ժողովոյն նախագահը՝ կառավարութեան կամացը դէմ՝ մսիւ Մոկէնը բանտէն հանել տուաւ։ Իւր կողմանէ, Հասարակապետութեան գահերէցը պաշտօնէն ազկեց Փարիզի զօրաց բանակին ընդհանուր հրամանատար Շանկարնիէ զօրապետը, որուն՝ յաջորդեց Պարակէ տ՝ Իլիէ զօրապետը։ Այս փոփոխութիւնը մեծ աղդեցութիւն պատճառեց ազգային խորհրդանոցին մէջ. որ Շանկարնիէ զօրապետին յանձնուեցաւ։ Ինչպէս կըտեսնուի խորհրդանոցին այս նոր կարգադրութիւնը մեծապէս կըդպչի կառավարութեան պատուոյն։ Որպէս և իսկ փոանգամ և ծանր կացութիւն մէջ կըգտնուի Պաղլոյ ներքին քաղաքականութիւնը. քանզի յայտնի երկպառակութիւն մը կայ օրէնսդիր իշխանութիւն և գործադիր իշխանութեան մէջ. կամ՝ ուրիշ բառերով՝ ազգային ժողովը և գահերէցը իրարու հետ խիստ հակառակ են առայժմ, ուստի մեծամեծ վտանգներ կրնայ ծագիլ։

ԳԵՐՄԱՆԻԱ։ Այս երկրին լրագիրները մեծապէս զբաղեալ են Տրեզդոյի ժողովոյն վրայօք. ուր արդէն գումարուեցան Գերմանիոյ տէրութեանց լիակատար իշխանութիւն ունեցող երեսփոխանաց շատերը։ Թէպէտև տակաւին այս ժողովոյն որոշումները ճշդիւ յայտնի չեն. սակայն ըստ երևմանց խաղաղասիրական վախճան մը պիտի ունենան. քանզի Աւստրիոյ և Բրուսիոյ կառավարութիւնները գրեթէ ըստ ամենայն մասին համաձայն են իրարու հետ. և հետևաբար Գերմանական պզտիկ տէրութեանց կողմանէ ընդդիմութիւններ ալ պատահին, յիշեալ երկու մեծ տէրութիւնները կրնան զանոնք դիւրացնել ինչ եղանակաւ որ կուզեն։ Կըհաստատեն թէ ժողովոյն որոշումները լսելու ժամանակը Աւստրիոյ Կայսրը և Բրուսիոյ թագաւորը անձամբ Տրեզդոյ պիտի երթան՝ մէջերնին եղած բարեկամութիւնը իրօք ցուցընելու համար բոլոր Գերմանիայի։

Աւստրիոյ պաշտօնեայ ժողովոյն նախագահ Շըվարցենպերկ իշխանը անցեալ դեկտեմբերի 16—28ին Պէրլին եկաւ և թագաւորը մեծապէս գոհ ըլլալով անոր այցելութենէն, խիստ մարդասիրութեամբ և մեծարանօք ընկալաւ և արքայական պալատը ճաշի հրաւիրեց զինքը։

ԲՐՈՒՍԻԱ. Պէրլին, 2—14 Յունվարի։ Մնոյս 3ին ըստ նոր տումարի խորհրդանոցները բացուեցան՝ ազգային երեսփոխանաց ժողովոյն մէջ թագաւորին գահախօսութիւնը տրուելու պատասխանուոյն վրայօք նորէն վիճաբանութիւններ եղան. բայց ըստ երևմանց առաջի ընդդիմութիւնները մեծապէս նուազած են. ուստի կըյուսացուի թէ այս խորհրդանոցին և կառավարութեան մէջ եղած քաղաքական դժուարութիւնները յաջող վախճան մը պիտի ստանան, և հետևաբար ծանր խռովութեան մը երկիւղը, որուն վրայօք լրագիրները զբաղեալ էին, օր ըստ օրէ կըփարատի։

ՀԱՆԳԱՄԱՆ ԼՈՒՐԵՐ

Զմիւռնիա, 19 Յունվարի։

Օսմանեան Դոյիֆ անուն շոգենաւը անցեալ շաբթու Կոստանդնուպոլսէն եկաւ՝ իւր հետը բերելով 800 կանոնաւոր զօրք. որոցմէ՝ ի զատ Իզմիրի ձմերանոցէն ևս 1000 զինուոր առնելով անմիջապէս մեկնեցաւ Յամոս երթալու։

— Ընդհանուր ամսոյ 31ին ահագին հրդեհ մը պատահեր է Աքսար, և քանի մը ժամու մէջ 225 խանութ և շտեմարաններ մէջը գտնուող վաճառքով լեցուն՝ հրոյ ճարակ եղեր են։

— Ալեքսանդրիայէն կըգրեն թէ, Նուպարեան մեծաշուք Առաքելէֆենտին՝ Եգիպտոսի առողջութեան ժողովոյն վերատեսուչ (քարանթինա նազիրի) կարգուեր է փոխանակ իւր եղբօրը մեռնոյ Նուպար պէյին, որուն բարձրապատիւ Աղպաս փաշային առաջին թարգման անուանիլը ծանուցինք մեր նախընթաց թերթովը։

—Թրեստի շոգենաւը, որ երէկ կըսպասուէր, այսօր մինչև կէսօր տակաւին չհասաւ։

ԱՊՈՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Զմիւռնիա, 19 Յունվարի։

Անգլոյ տեսակ Փաղամուտը կուզուի և 66—68 ղրշի դիւրավաճառ է։ Թրեստի պատուական տեսակին գինը՝ 88 ղրշէ կենդինարը. միջակ տեսակինը՝ 75—78։ Հէրլին հանդարտութեամբ է և այսօրուան արժէքը 12—15½ է օխան։ Ալիսանդրիոյ վերջի գինը 100 ղրշէ էրբին։ Լաոդիկիոյ բնիտոնը անցեալ շաբթու 16 ղրշի ծախուեցաւ օխան։ Խահվէն 710—720 ղրշի կըծախուի 100 օխան։ Շաքարին գինը 195—198 ղրշէ կենդինարը։ Միւս վաճառաց վրայօք նշանակելի արժանի փոփոխութիւն մը չունիմք ծանուցանելու։

ԼՈՆԴՈՆ։ Դրամափոխութիւն։

Լոնտոն	110—110½ հինգնոցով։
Մարսիլիա	177½—178
Թրեստ	

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

Բաղաքական տնտեսութեան վրայ տեղեկութիւններ։

Յօրինեաց Նիկողայոս Մ. Օ.օրայեան։

Տպեալ Դկրդանդնոպոլսի յամին 1849

Ի տպարանի Յովհաննու Մի-հէնդիսեան։

Այս տեղեկութիւնները զատ զատ յօդուածով Հայոց լրագրոյն մէջ ըստ ժամանակին հրատարակուեցան. իսկ այժմ հեղինակը մէկ գիրքի մէջ ամփոփելով զանոնք և հարկաւոր եղած սրբագրութիւնները ընելէն ետև, վերջին տպագրութեամբ կընուիրէ Ազգին։

Բաղաքական տնտեսութիւնը խիստ օգտակար և հարկաւոր գիտութիւն մը ըլլալը ամէն մարդ գիտէ. ուստի աւելորդ կըհամարիմք երկարօրէն գրել աս տեղս անոր վրայօք։

Այս գիրքը կըգտնուի Պոլսոյ գրեթէ ամէն գրավաճառաց քով, և մասնաւորապէս Մերճանք կազմարար պարոն Պաղտասարին խանութը։

ԱՐՈՒԵՍՏ ԵՐԿԱՅՆԱԳԵՑՈՒԹԵԱՆ

Շարագրեաց պարոն Անդրեաս Փէֆովիչ։

Ս-ըվեոյ հայագէտ Բ-ծիլլն։

Տպեալ յամին 1850 ի Կոստանդնուպոլիս,

Ի տպարանի Յովհաննու Մի-հէնտիսեան։

Այս գործոյն օգտակարութիւնը յայտնապէս կըտեսնուի՝ որովհետև հեղինակը կըջանայ բնական ապացոյցներով որոշել թէ ինչ դիրքեր ի գործ դնելը է առողջ, երկայն երջանիկ կեանք մը անցնելը համար. նմանապէս ի՛նչ մարմնոյ հեռանալը է, որպէսզի առանց յուսալի կենաց վերջին սահմանը հասնիմք։ Ընդհերքողը պիտի նաև նաև ասպիկ և անկարգ կիրքերը, որոնք խանձը, բարկութիւնը, ագահութիւնը, որոնք մեծ աղտեղութիւն մեր կենաց կարճատևութեան վրայ։

Այս գիրքին գինը 30 ղրուշ է, և կըգտնուի Կոստանդնուպոլսոյ գրավաճառաց քով։

Հրատարակիչ և տէր Լրագրոյս։

Պ. Գ. Պալտաճեան։

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ